ԱՐԺԵՔԱՎՈՐ ՏՊԱԳԻՐ ԳՐՔԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ*

ՀՏԴ: 025.171
DOI: 10.54503/2953-8092.2024.2(4)-103

ՍԱԹԵՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Մատենադարան. Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ

ORCID: 0009-0006-7502-376X

Սույն ուսումնասիրությունը վերաբերվում է Վարդաձոր գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ) հանգրվանած տասնչորս անուն տպագիր գրքի մասնավոր հավաքածուին: Գրքերի մի մասը բերվել է Արևմտյան Հայաստանի Մշո տարածաշրջանից տեղահանված և Թազագյուղում (գյուղ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ) 1800-ական թթ. հաստատված Գեղամ Մնացականյանի ընտանիքի կողմից, ում և նախնիները ժառանգաբար փոխանցել են գրքերը: Սակայն, Գեղամ քահանայի ավագ դուստրը՝ Հռիփսիմեն, հավաքածուն 1940-ական թթ. տեղափոխում է ամուսնու գյուղ՝ Վարդաձոր, կորստից և վնասումից փրկելու համար, քանի որ հայրը աքսորվում է: Ավելի ուշ՝ Հռիփսիմեն հավաքածուն ժառանգել է փոքր դստերը՝ Վարդանուշին, և փեսային՝ Սանասար Մանուկյանին: Վերջինս փոխանցել է կրտսեր որդուն՝ Ազատ Մանուկյանին: Մանուկյանների ջանքերով՝ 2010 թ. տան հարակից մասում կառուցվել է փոքրադիր քարակերտ մատուռ-սրբատեղի: Աղոթատունը կառուցվել է Վարդանուշ Մանուկյանի երազի հիմամբ. սուրբը մատնանշել է մատուռի կառուցման վայրը, որտեղ նախկինում խնձորենի է եղել:

Ավելի քան տասնչորս բազմաբնույթ տպագիր գրքերի (մեկը՝ հնատիպ) հավաքածուն ներառում է՝ Ժամագիրք Ատենի (1785 թ.), Պատմութիւն

* *Հոդվածը ներկայացվել է 17.07.2024, գրախոսվել է 04.08.2024, ընդունվել է տպագրության 29.10.2024:*
The article was submitted on 17.07.2024, reviewed on 04.08.2024, accepted for publication on 29.10.2024.

Ասպուածաշունչ գրոց Հին և Նոր կտակարանաց (1805 թ.), Նոր Կտակարան սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի (1814 թ.), Յովսէփ Սաղմկեցի. Քննութիւն խնդրոց (1846 թ.), Ժամագիրք (1854 թ.), Շարական (1861 թ.), Ժամագիրք (1862 թ.), Խորհրդապետր (1880 թ.), Քարոզներ (խորագիրը՝ պայմանական, 1900-ական թթ.՞), Ժամագիրք (1903 թ.), Պատմութիւն Նահանգին Սիսական (1910 թ.), Օրացոյց (1960 թ.):

This study deals with the private collection of fourteen printed books located in the village of Vardadzor (Gegharkunik region of the Republic of Armenia). Some of the books included in the collection were brought to Tazaghugh (village in Gegharkunik, RA) from the Mush region of Western Armenia in the 1800s. confirmed to the family of Gegham Mnatsakanyan, whose ancestors inherited the books. However, Hripsime, the eldest daughter of priest Gegham, bought the collection in the 1940s. moves to her husband's village, Vardadzor, to save her from loss and damage, as her father is exiled. Later, Hripsime inherited the collection to his younger daughter, Vardanush, and son-in-law, Sanasar Manukyan. The latter passed it on to his younger son, Azat Manukyan. With the efforts of the Manukyans, in 2010 a small stone chapel-sanctuary was built in the adjacent part of the house. The prayer house was built based on Vardanush Manukyan's dream. the saint pointed out the place where the chapel was built, where there used to be an apple tree.

The collection of more than fourteen diverse printed books (one rare book) includes: Book of Hours of Athens, 1785, History of the Holy Bible, Old and New Testaments, 1805, New Testament of the Holy Gospel of Our Lord Jesus Christ, 1814, by Joseph Salmketsi. Exam petition: 1846, Book of Hours: 1854, Hymn: 1861, Book of Hours: 1862, Book of Counsel: 1880, Sermons (script: conventional), 1900s. (probable), Book of Hours: 1903, History of the State of Sisakan: 1910, Calendar, 1960.

Բանալի բառեր՝ Գեղարքունիքի մարզ (ՀՀ), Վարդաձոր գյուղ, Մշո գավառ, Արևմտյան Հայաստան, Թազագյուղ, Մանուկյանների ընտանիք, տպագիր գրքեր, մասնավոր հավաքածու:

Ինչպես հղել՝ Գրիգորյան, Ս. (2024), Արժեքավոր տպագիր գրքերի մասնավոր հավաքածուն, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, *2*(4), 103-124. https://doi.org/10.54503/2953-8092.2024.2(4)-103

How to cite (APA style): Grigoryan, S. (2024), The private collection of valuable printed books, *Herald of the Armenian Library Association*, *2*(4), 103-124. https://doi.org/10.54503/2953-8092.2024.2(4)-103

Ներածություն

Հայկական գրատպությունը սկզբնավորվել է Հայաստանի սահմաններից դուրս՝ Վենետիկում, 1512 թվականին, ապա տարածվել է աշխարհի բազմաթիվ վայրերում՝ Կոստանդնուպոլիս (1567 թ.), Հռոմ (1579 թ.), Նոր Ջուղա (1638 թ.), Ամստերդամ (1660 թ.), Ս. Էջմիածին (1771 թ.), Սանկտ Պետերբուրգ (1781 թ.), Աստրախան (1796 թ.) (ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 7), Թիֆլիս (1823 թ.) (ԼԵՎՈՆՅԱՆ 1946, 224), Արցախ՝ Շուշի (1828 թ.), Երուսաղեմ (1833 թ.) (ՄՈՒՐԱԴՅԱՆ 2011, 3), Երևան՝ 1876 թ. (ԼԵՎՈՆՅԱՆ 1946, 234) և այլուր: Այսօր հայերեն տպագիր ժառանգության պատկառելի հատվածը պահպանվում է գրադարաններում, մշակութային և հոգևոր կենտրոններում՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Մինչդեռ մի շարք արժեքավոր տպագրություններ հանգրվանել են մասնավոր հավաքածուներում և առ այսօր ամբողջությամբ ուսումնասիրված չեն: Սույն հոդվածում ներկայացնում ենք անհատի պատկանող մասնավոր տպագրական մի հավաքածու, որը ներառում է տասնչորս անուն տպագիր գիրք:

Տպագիր գրքերի անցած ուղին և վերջնական հանգրվանը

Արժեքավոր տպագիր գրքերի հավաքածուն պատկանում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր գյուղի (ՀԱԿՈԲՅԱՆ, ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ, ԲԱՐՍԵՂՅԱՆ 1998, 775) բնակիչ Ազատ Մանուկյանի ընտանիքին: Մինչ այստեղ հանգրվանելը, այն բավական երկար ճա-

նապարհ է անցել[1]: Հավաքածուն Վարդաձոր գյուղ է տեղափոխվել 1940-ական թվականներին Մարտունու շրջանի (Գեղարքունիքի մարզ) մեկ այլ գյուղից՝ Թազագյուղից: Տպագիր գրքերի մի մասը Թազագյուղ է բերվել Արևմտյան Հայաստանի Մշո գավառից 1800-ական թվականների տեղահանության ժամանակ: Այն պատկանել է Գեղամ Մնացականյանի ընտանիքին, ում և նախնիները ժառանգաբար փոխանցել են գրքերը: Տեր Գեղամ քահանայի ավագ դուստրը՝ Հռիփսիմեն, 1922-1923 թթ. ամուսնացել է վարդաձորաբնակ Քյարամ Խաչատրյանի հետ: Քանի որ հայրն այդ շրջանում աքսորված էր, իսկ հավաքածուն կարող էր կորստյան մատնվել, Հռիփսիմեն այն տեղափոխել է Վարդաձոր գյուղ՝ հետագայում որպես ժառանգություն թողնելով փոքր դստերը՝ Վարդանուշին և փեսային՝ Սանասար Մանուկյանին: Ս. Մանուկյանը ժառանգաբար փոխանցել է կրտսեր որդուն՝ Ազատ Մանուկյանին: Մանուկյանների ջանքերով (մասնավորապես՝ Ազատ Մանուկյանի) 2010 թ. տան հարակից մասում կառուցվել է փոքրադիր քարակերտ մատուռ-սրբատեղի: Աղոթատան կառուցումը միայն ցանկության դրսևորում չի եղել: Ըստ կրտսեր հարսի՝ Մարինե Մանուկյանի (Ազատ Մանուկյանի տիկնոջ), Վարդանուշ Մանուկյանի երազի հիմամբ է այն կառուցվել. սուրբը մատնանշել է մատուռի կառուցման վայրը, որտեղ նախկինում խնձորենի է եղել, ինչից հետո, ընտանիքի անդամները հետամուտ են եղել սրբի հորդորներին և կառուցել են աղոթատեղին: Այսօր սուրբ գրքերի պահպանումը և սերունդներին փոխանցելու գործը ստանձնել են

[1] Ազատ Մանուկյանի նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ գավառի Դարափի Վերին գյուղից:

ամուսիններ Ազատ և Մարինե Մանուկյանները[2]:

Հավաքածուն ընդգրկում է տասնչորս միավոր տպագիր գիրք, որից մեկը հնատիպ[3]:

Այժմ ներկայացնենք գրքերը տպագրության ժամանակագրական կարգով.

1. Ժամագիրք Ատենի *(հնատիպ):* Շուրջ 426 զարդափակ էջից բաղկացած Ժամագիրք Ատենին (ՃԻՋՄԷՃԵԱՆ 1957, 423; ՏԷՐ-ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ, ԳԱՆԳՐՈՒՆԻ, ՏՕՆԻԿԵԱՆ 1968, 194; ՕՐՄԱՆԵԱՆ 1979, 124-125) տպագրվել է Ս. Էջմիածնի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» անունը կրող տպարանում, 1785 թ. (ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ և այլք 2021, 66-68): Կազմը՝ 26x19,5 սմ, շարվածքը՝ 23x16,5 սմ, գրությունը՝ երկսյուն, գիրը՝ բոլորգիր, որոշ հատվածներ՝ նոտրգիր, օգտագործված են նաև գլխագրեր, նյութը՝ թուղթ[4]: Տողերի քանակը միջինում՝ 41-45: Կազմը՝ փիրուզագույն թավշյա կտոր, միջուկը՝ ստվարաթուղթ, աստառը՝ կապույտ կտոր, լուսանցակողերը՝ կարմիր թանաքով: Գիրքն ունի վնասված հատվածներ. տպագրի անվանաթերթը և որոշ թերթեր՝ 1-64, 105-112, 367-398, 401-426 բացակայում են: Թերթ 67, 147-148-ի ստորին եզրը՝ երկայնակի պատռված-հանված, 104-րդ թերթի ստորին եզրը՝ պատռված-ընկած: Թերթերին կան զանազան կեղտաբծեր, յուղի,

---

[2] Նշված տպագիր նյութերը Վարդաձոր գյուղում հայտնաբերված միակ օրինակները չեն: Կան այլ անուններ ևս, սակայն սույն հավաքածուն թվաքանակով ամենամեծն է գյուղում: Երախտագիտությունս եմ հայտնում Մանուկյան ընտանիքին, մասնավորապես՝ Ազատ և Մարինե Մանուկյաններին՝ հավաքածուի ուսումնասիրությունը ինձ վստահելու համար: Առանձնահատուկ շնորհակալություն արաբագետ, թարգմանիչ, մատենագետ Միհրան Մինասյանին՝ աշխատանքի վերաբերյալ առաջարկների համար:

[3] Ցանկը տե՛ս հոդվածի սկզբում:

[4] Հոդվածում ներառված բոլոր տպագիր գրքերի նյութը թուղթն է, գիրը՝ բոլորգիրը:

խոնավության, մոմի, այրվածքի հետքեր, լուսանցակողերի կարմիրը մասամբ սևացած է: Որոշ թերթեր գործածության հետևանքով, եզրերում և ստորին անկյունում մաշված-պատռված են, որոշները հիմքում և եզրերում նորոգված են սպիտակ թղթով: Չնայած վերը թվարկված փոփոխությունների՝ հնատիպի վիճակը գնահատվում է բավարար:

Պարունակում է ամբողջական Ժամագիրքը, Դավթի Սաղմոսները և Տոնացույցի երկու մասերը:

Տիտղոսաթերթ Ա.՝ *[ԳԻՐՔ / ԺԱՄԱԿԱՐԳՈՒ/ԹԵԱՆՑ ՍՐԲՈՅ / Եկեղեցւոյս Հայաստանեայց / և Կարգաւորութեան Սաղմոսացն / Դաւթի Մարգարէին: Արարեալ սրբոց Թարգմանչաց / և Հայրապետացն մերոց ի փառս / Ամենասրբոյ Երրորդությանն Հօր / եւ Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, / Որ է օրհնեալ յաւիտեան. Ամէն]*[5]:

Ժամագիրքը տպագրական զարդամոտիվներով է: Ա. տիտղոսաթերթն ամբողջությամբ խորանի մեջ է, Բ. տիտղոսաթերթը զարդափակ է: Քառածալ, մամուլանիշերը՝ հայատառ: Տպագիրն ունի գլխազարդեր, վերջնազարդեր, կիսախորաններ, լուսանցանիշեր, լուսանցազարդեր և զարդագրեր՝ մարդագիր, թռչնագիր, թռչուն-ձուկ տասը փորագիր պատկեր: Այսօր տպագրից օրինակներ կան մի շարք կենտրոններում՝ Հայաստանի ազգային գրադարանում, Հայաստանի պատմության թանգարանում, Երևանի պետական համալսարանի գրադարանում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում և այլուր (ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 571-573):

2. Պատմութիւն Աստուածաշունչ գրոց Հին և Նոր կտակարանաց: Տպագրվել է Հովհաննես Զոհրապյանի (ՍՏԵՓԱՆՅԱՆ

[5] Մնացյալ՝ Բ., Գ., Դ. տիտղոսաթերթերի նկարագրությունները տե՛ս ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ և այլք 2021, 64-66; ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 571: Այն տպագրերը, որոնք չունեն անվանաթերթ, վերականգնված են Հայաստանի ազգային գրադարանում պահվող օրինակներից: Տե՛ս գրադարանի կայքէջ՝ https://www.nla.am/:

1973, 332; ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ 2022, 67-90) աշխատասիրությամբ, Վենետիկում, Ս. Ղազարի տպարանում, 1805 թ.: Սույն օրինակը բաղկացած է 527 էջից, կազմը՝ 18x10 սմ, շարվածքը՝ 15,2x7,9 սմ, գրությունը՝ միասյուն, գիրը՝ բոլորգիր, ունի նաև հիշագրեր, տողերի քանակը միջինում՝ 27-34: Կազմը մուգ կապույտ թավշյա կտոր է, միջուկը՝ ստվարաթուղթ, աստառի Ա. փեղկը՝ շագանակագույն ծաղկած թուղթ: Տիտղոսաթերթը, Բ. փեղկի աստառը պոկված-ընկած են: Ունի բացակա էջեր սկզբից՝ 1-22, 31-3: Ա. փեղկի վերին հիմքը՝ պոկված: Լուսանցակողերը սևացած են: Էջեր՝ 23-30-ը հետագա նորոգման արդյունքում փակցված են էջ 524-ից հետո: Չնայած եղած որոշակի փոփոխություններին՝ տպագրի վիճակ կարելի է գնահատել բավարար:

Տիտղոսաթերթ՝ *[ՊԱՏՄՈՒԹԻՒՆ / ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ / ՀԻՆ և ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ: Համառօտեալ դիւրիմաց ոճով ի լեզու աշխարհաբառ՝ յուսումն պարզամտաց և համբակաց: / Ի Հ. Յովհաննէս Վարդապետէ Զօհրապեան Կոստանդնուպօլսեցւոյ: / Երկրորդ տպագրութիւն՝ նորոգ ուղղագրութեամբ և յաւելուածովք ինչ նորին հեղինակի յարմարեալ: / Հրամանաւ Տեառն Տեառն Ստեփաննոսի վարդապետի Ագոնց, Արք/եպիսկոպոսի և Աբբայի միաբանութեան մեծին Մխիթարայ Աբբահօր: / Յամին 1805. Եւ ի թուականութեանս / Հայոց ՌՄԾԴ. (1805) / Ի Վենէտիկ, / Ի Վանս սրբոյն Ղազարու /]:*

Տիտղոսաթերթը՝ առնված բուսական եզրագոտու մեջ: Գիրքը զարդամոտիվներով է: Ունի երկու փորագիր պատկեր, բուսական գլխազարդեր և վերջնազարդեր, զարդագրեր՝ հանգուցագրեր: Օրինակներ ունեն Հայաստանի ազգային գրադարանը, Զմմառի վանքը, Մատենադարանը (ԴԱՎԹՅԱՆ 1967, 21):

3. Նոր Կտակարան սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Տպագրվել է 1814 թ. Ս. Պետերբուրգում, Հովսեփ Հովհաննիսյանի տպարանում (ԲԱԲԱՅԱՆ 1963, 96-97): Էջերի քանակը՝ 544, 2, կազմը՝ 20x12,5 սմ, շարվածքը՝ 16,3x9,5 սմ, գրությունը՝ միասյուն, գիրը՝ բոլորգիր, օգտագործված են գլխագրեր: Տողերի քանակը՝ միջինում 25-39: Էջ 438՝ սև մատիտով նշում՝ «Զալիպեկ, Իրան Հաջաղօվ, Կարս Կարապետ»: Կազմը՝ մուգ շագանակագույն կաշի: Կազմից պահպանված է միայն մեջքի հատվածը, որը հիմքից գրեթե անջատված է, ինչի հետևանքով կարերը թուլացած և իրարից առանձնացված են: Սկզբից և վերջից թերի է: Աստառը, միջուկը՝ բացակա, ունի պակաս էջեր՝ 1-108, 529-544, էջ 109-110՝ հիմքից պոկված: Թերթերին նշմարվում են խոնավության հետքեր, մասամբ՝ կեղտաբծեր: Տպագիր գրքի ընդհանուր վիճակը՝ վատ, ենթակա է նորոգման:

Տիտղոսաթերթ՝ *ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ / ՍՐԲՈՅ / ԱՒԵՏԱՐԱՆԻ / ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ / ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ / Ի Հայրապետու[թ]ե[ան] Ս[ր]բ[ո]յ Աթոռոյն Միածնաիջի Տեառն / ԵՓՐԵՄԱՅ Սրբազնասուրբ Կաթուղիկոսի / ամենայն Հայոց: / Եւ յԱռաջնորդութեան Հայոցն Ռուսաստանու Տեառն / Յոհաննու Առաքելաշաւիղ Արք Եպիսկոպոսի: / Տպագրեալ ջանիւք և արդեամբք ի միաբանութ[են]է / ժողովոյն Ա[ստուա]ծաշնչի, որ ի Սանկտպետերբուգ: / Ամենօգոստափառ, Կայսերական, Բարձրագոյն / Հրամանաւ հաստատեալ Տպարանի, որ ի / Գահոյանիստն / ՍԱՆԿՏՊԵՏՐԲՈՒՐԳ. / Յովսեփայ Ս. Յոհաննիսեանի Յաժդերխանցւոյ: / Յամի Տեառն 1814, / Իսկ ըստ Հայոց ՌՄ ԿԴ: /*

Գրքից օրինակներ են պահպանվում Հայաստանի ազգային գրադարանում, Մատենադարանում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում և այլուր (ԴԱՎԹՅԱՆ 1967, 58):

4. Քննութիւն խնդրոց: Տպագրի հեղինակն է Հովսեփ Սաղմ-կեցին: 231 (20 չհ. էջ) էջ կազմող գիրքը տպագրվել է 1846 թ. Կ. Պոլսում՝ Օրթագյուղում, տպագրիչ Պողոս Արապյանի տպարանում (ՍՏԵՓԱՆՅԱՆ 1973, 141; ԿՈՐԿՈՏՅԱՆ 1964, 80-87): Կազմը՝ 22,7x14,5 սմ, շարվածքը՝ 18,5x11,5 սմ, գրությունը՝ միասյուն, տողերի քանակը՝ 36-37 (նաև՝ 22, 28, 30, 31): Կազմը՝ շագանակագույն կաշի, մեջքը՝ կարմիր հենքով ծաղկազարդ մետաքս: Միջուկը ստվարաթղթից է, աստառը՝ թղթից: Տպագիրը գործածությունից մաշված է: Միջուկը՝ շերտազատված և կազմից առանձնացած: Ա. փեղկի աստառը, Բ. փեղկի վերին հատվածը՝ բացակա: Լուսանցակողերը՝ մասամբ սևացած: Թերթեզերքը՝ աննշան պատռվածքներով: Թերթերին նկատելի են կեղտաբծեր, խոնավության հետքեր: Բնագիրը սկզբից և վերջից պակասավոր է՝ թ. 1-18, 211-231 և այլն: Ընդհանուր վիճակը՝ բավարար:

Տիտղոսաթերթ՝ *ՔՆՆՈՒԹԻՒՆ ԽՆԴՐՈ / ՅՕՐԻՆԵԱԼ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ՏԻՐԱՅՈՒ ՅՈՎՍԷՓ ԲԱՐԵՋԱՆ / ՎԱՐԺԱՊԵՏԻ ՍԱՂՄԿՈՅ ԵՒ ՍՐԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ ՏԷՐ ԳԷՈՐԳ ՔԱՀԱ-/ՆԱՅԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ / Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ Տ[ԷՐ] Տ[ԷՐ] ՆԵՐՍԷՍԻ ՍՐԲԱՋՆԱ/ԿԱՏԱՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: / ՀՐԱՄԱՆԱՒ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՕՊԼՍԻ Տ[ԷՐ] ՄԱՏ/ԹԷՈՍԻ ՍՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ / Արդեամբք գերամեծար Փիշմիշեան քեռորդի բարեսէր մահտեսի Յովհաննէս աղայի Ան/տօնեան, որ յԱկնայ գեղջէն Ապուչեխու: / Ի ՏԻՊ ԱՐՁԱՆԱՅԵԱԼ 1846 ՅՕՐԹԱԳԻՒՂ / Ի ՏՊԱՐԱՆԻ ՊՕՂՈՍԻ ԱՐԱՊԵԱՆ ԱՊՈՒՀԵԽՅԻՈՅ]:*

Նշված տպագրից օրինակներ առկա են Հայաստանի ազգային գրադարանում, Մատենադարանում, Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանում (ԴԱՎԹՅԱՆ 1967, 339):

5. Ժամագիրք: Գրքի տպագրության վայրն է Շուշի քաղաքը (Արցախի Հանրապետություն): Տպագրիչ Մինաս Տարոլլիճյանցի ջանքերով՝ իր իսկ անվան տպարանում հրատարակված ժամագրքերի շարքին է դասվում: Տպագրության տարեթիվը՝ 1854 թ.: Շուրջ 523 էջից բաղկացած միավոր է: Կազմը՝ 16,2x9,5 սմ, շարվածքը՝ 12-13,5x7,5 սմ, գրությունը՝ միասյուն, տողերի քանակը միջինում՝ 18-25: Կազմը՝ դրոշմազարդ մուգ կապույտ թավիշ, միջուկը՝ ստվարաթուղթ: Աստառը՝ պատռված-ընկած, ներկայումս՝ սոսնձված էջով: Լուսանցակողերը՝ գործածությունից սևացած: Որոշ թերթերին առկա են կեղտաբծեր, յուղի, խոնավության հետքեր: Թ. 30-60 վերին և արտաքին եզրը պատռված-ընկած է, սկզբում և վերջում կան բացակա թերթեր՝ 1-29, 46-523: Այդուհանդերձ, տպագրի վիճակ գնահատվում է բավարար:

Տիտղոսաթերթ՝ ԺԱՄԱԳԻՐՔ / ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑ/ԽՈՅ: / ՏՊԱԳՐԵԱԼ / Ի Հայրապետութեան Տեառն և Տեառն Ե. / ՆԵՐՍԻՍԻ Աստվածապատիւ Կաթուղիկոսի Ամե/նայն Հայոց և Ասպետի զանազան Նշանաց / Ա[ստուա]ծահաստատ ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆ ՌՈՒ/ՍԱՑ: / Հրամանաւ Ա[ստուա]ծարեալ Առաքելաշաւիղ / Բարձր Սրբազան Արքեպիսկոպոսի Վիճա-/կաւոր Առաջնորդի և Մետրապօլիտի Հայոց / Ղարաբաղու և այլոց, Տեառն Բաղասարայ / Իշխանազնէի Հասան Ջոլալեանց, և Աս-/պետի ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱՑ: / Արդեամբք և ծախիւք Պարոն Մ. Յ. Պապեանց: / *Ի Տպարանի Մինասի Մ. Տառոլիճեանց / 1854, Ի ՇՈՒՇԻ ՌՄԳ.: /*

Տպագիր գիրքը զարդամոտիվներով է, որն ունի բուսական և զարդանախշ գլխազարդեր, գլխագիր, վերջնազարդեր: Տպագրից

մեզ հայտնի միակ օրինակը գտնվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (ՈՍԿԱՆՅԱՆ, ՍԱՎԱԼՅԱՆ, ՍՈՂՈՄՈՆՅԱՆ, ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, ՍԱՀԱԿՅԱՆ, ԹԱԴԵՎՈՍՅԱՆ 1999, 23):

6. Ժամագիրք: Տիտղոսաթերթի բացակայության պատճառով հնարավոր չեղավ պարզել գրքի տպագրության տարեթիվն ու վայրը: Տպագրում առկա պատկերներից և գլխազարդերից ենթադրում ենք, որ այն հարում է Երուսաղեմում կամ Կոստանդնուպոլսում 1850-1870-ական թվականներին տպագրված գրքերի շարքին: Ներկայում էջերի քանակը 342 է (ավելին է եղել): Էջերը 16,8x11 սմ մեծության են, գրության միասյուն շարվածքով՝ 13-13,5x8,8 սմ: Տողերի քանակը՝ 20-29: Գիրքը՝ շագանակագույն ստվարաթղթյա կազմով, մեջքը՝ գծավոր մոխրագույն կտոր, Բ. կազմաստառին փակցված սպիտակ թղթին՝ մանուշակագույն թանաքով՝ «Քրիստոնական վարդապետութիւն» գրվածքը: Տպագրի բովանդակության մեջ առկա են փորագիր պատկերներ և բուսական գլխազարդեր: Կնքադրոշմ՝ էջ 321՝ սև թանաքով շրջանակ: Կազմը՝ մաշված-ճաքճքած, մատիտի, թանաքի հետքեր: Կազմը՝ մեջքից թուլացած, որի հետևանքով թերթերի որոշ հատվածներ հիմքից անջատված են: Կազմաստառը և միջուկը բացակայում են: Լուսանցակողերը՝ սևացած: Էջերին կան զանազան բծեր, կեղտաբծեր, խոնավության, մոմի, մատիտի հետքեր: Միավորը թե՛ սկզբում, թե՛ մեջտեղում, թե՛ վերջում ունի թափված հատվածներ, պահպանված է՝ 211-342 էջերը: Այն բավականին վնասված է և ենթակա է նորոգման:

7. Շարականոց: Գրքի տպագրության տարեթիվը՝ 1861 թ.: Տպագրության վայրը՝ Վաղարշապատ: Այն Ս. Էջմիածնի տպարանից (ԲԱԲԱՅԱՆ 1963, 111; ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ և այլք 2021, 109) լույս տեսած ժամագրքերից մեկն է: Էջաքանակը՝ 784, էջերի մեծությունը՝ 21x14 սմ, գրության միասյուն շարվածքով՝

16x7 սմ: Տողերի քանակը՝ 22-23: Կազմը՝ մուգ շագանակագույն կաշի, միջուկը՝ ստվարաթուղթ, աստառը՝ տպված թուղթ, պահպանակ՝ Ա.՝ տպված թուղթ:

Տիտղոսաթերթ՝ *[ՇԱՐԱԿԱՆ / ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳՈՅ / ՍՈՒՐԲ ԵՒ ՈՒՂՂԱՓԱՌ / ԵԿԵՂԵՑԻՈՅՍ / ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ / ՅՕՐԻՆԵԱԼ / Ի ՍՐԲՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԱՅՆ ՄԵՐՈՅ ԵՒ Ի ՍՐԲՈՅ / ՇՆՈՐՀԱԼԻՈՅՆ ԵՒ ՅԱՅԱԼՈՅ ՍՈՒՐԲ ՀԱՐՑ ԵՒ / ՎԱՐԴԱՊԵՏԱՅ: / Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. / ՄԱՏԹԷՈՍԻ ԱՀԳԱՍԷՐ / ԵՒ ԱՍՏՎԱԾԸՆՏԻՐ ԿԱ-/ԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ / ՀԱՅՈՅ / ԵՒ / ԱՍՊԵՏԻ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ / Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ / ՌՅԺ-1861]:*

Վիճակը գնահատվում է բավարար: Կազմը՝ մաշված: Կազմաստառը մաշված-կեղտոտված է: Լուսանցակողերի կարմիր ներկանյութը մասամբ գունաթափ է, սևացած: Թերթին կան կեղտաբծեր, խոնավության, թանաքի հետքեր: Էջ 755-784 և Բ. պահպանակը՝ գրված թուղթ: Էջ 3-4, 281-284՝ լրացված տետրակի թղթով և գրված կապույտ թանաքով: Թվայնացված օրինակում կա տպագրական սխալ՝ 56 էջի փոխարեն տպագրված է 55, 291 էջի փոխարեն տպագրված՝ 261-ը, 294 էջի փոխարեն տպագրված՝ 264-ը:

Տպագիր գիրքն ունի զարդագրեր՝ գլխագրեր, երեք փորագիր պատկեր, բուսական գլխազարդեր, միջնազարդեր և վերջնազարդեր: Էջ 101, 246, 484՝ կնքադրոշմ՝ սև թանաքով շրջանակ, որի մեջ եկեղեցու պատկեր, եզրագոտում՝ հայատառ և լատինատառ գրություն՝ *«Եկեղ/// ///ին /// ГЕОРГИА ///»:* Հետագա հիշատակարան՝ պահպանակ Բա[6]՝ *«Մարքարով», «Տալ Կարապետաց, հրաշափառ Աստված, 421 համար»,* պահպանակ Բբ (հակառակ դիրքով)՝ *«Մար-*

[6] Բոլոր հետագա հիշատակարանները շղագրով են: Աշխատանքում ներկայացված են միայն կարևոր տեղեկություններ պարունակող հիշատակարանները, որոնք գրված են կապույտ, սև, մանուշակագույն թանաքով և սև մատիտով:

քարին, ///արքօն, Մարքար, Վարդան», էջ 124՝ «184/// ամի Ավետիս Զուբարօվ մուրսն (՞)», էջ 159՝ *«Ես գրէցի Մը̲կը̲րտիչ Մագակով անարժան ձեռով»,* էջ 209՝ *«1799 ամի 10ն փետրվարին Հարութենի որդի Հ̲օրբէլ մորեն եղավ»,* էջ 229՝ *«1884 ամի, ես՝ Ալեքսան Մէլ-քաւով, փետրվարի 1ն կես իմ փառ̲օ̲ տւավ Մարտին»,* էջ 239՝ *«1886 ամի 19 օր նոյեմբերի Հարոյի որդի Մարտիրոս մ̲օ̲րից եղավ: Աստ-ված բարի վայ[ե]լում տացէ. ամէն»,* էջ 257՝ *«1881 ամի ԻԷ. (27) դեկ-տեմբերի եղաւ Գրիգորի որդի Սէրգոն մ̲օ̲րից եղաւ»,* էջ 279՝ *«1884 ամի, ի 10 յուլիսին Կարապետ Հ̲օվէ̲օվի որդի Մը̲նացական մ̲օ̲րից եղավ: Աստված բարի վայէլում տաջ̲էէ. ամէն: 1884 ամի ի 10 յուլիսին [Մ]իրդաթ Մարգարովի որդի Սը̲հակ մ̲օ̲րից եղիվ: Աստված բարի վայէլում տաջ̲էէ. ամէն»,* էջ 282՝ *«1884 ամի մայիսի 10-ին յաթան /// հասարակության գլխաւոր [տ]անուտէր ընտրեց Հայրապէտ Մելիք Բարսեղով»,* էջ 290՝ *«183 (կտրված) տէր էր Բդոյի, որ թե Մայրամ մ̲օ̲րից եղավ: Աստված բարի վայէլում տաջ̲էէ»,* էջ 414՝ *«1882 ամի 4 օրն փետրվարի, տէր Գրիգորի որդի՝ Սը̲մբաթ̲ մ̲օ̲րից եղեւ: Աստված բարի աչ̲ողութիւն տացէ. ամէն»,* էջ 418՝ *«1892 ամի 1 օրն յունվարին ձեռնադրին Ներքին Ղարանլուղցի Գրիգորին չորրորդ աստիճանի համար: Աստուած բար աղրութիւն տացէ»,* էջ 441՝ *«Այս Շարական ևս պատկանում է տէր Եղահազար Եղաք: Առայ ի 1890 թվականին Նորգ Ռազան Թազան///»,* էջ 450՝ *«1891 ամի 15 օրը մայիսին եղաւ, Գէորգի որդի Համբարձում մ̲օ̲րից եղաւ: Ուրախ ժամ Աստուած»,* էջ 520՝ *«1884 ամի 22 օրն փետրվարի, տէր Գրիգորի որդի Արշակ մ̲օ̲րից եղեւ»:* էջ 526՝ հակառակ դիրքով՝ *«Պետրոս, Ավի/// Կարապետ ///»:* էջ 529՝ *«1890 ամի է օր /// Հայրապետ/// Խան̲օվի որդի Մարտիրոս մ̲օ̲րից եղավ: Աստված բարի վայելում տացէ. ամէն»:* էջ 554՝ *«Ես՝ Մնացակա[ն] Գրիգորով»:* էջ 567՝ *«1923թ. յուլիսի 6-ին Արզմանի որդի Գարասիմ մորից եղավ: Աստված իրեն*

բարի բախտ և վայելչութիւն տայ, լինի ամենախելոք և կրթված, ամենայն նեղութիւններից և փորձանքներից ազատ մնա»: Էջ 582՝ *«1883 ամի 1 յու[նի]սի, Մը̱կրտիչ ըսկայի աս (՞)»:* Էջ 648՝ *«Ա. (1) օր նոյեմբերին 1880 ամի Գէօրք Բարսեղո̱վի որդի Այրմենայկ մը̱ռից եղավ: Աստված բարի վայելում տաջէ. ամէն»:* Էջ 658՝ *«1872 ամի 23 օրն մայիսի, ի Ներքին Ղարանլուղայ գիւղոյ բնակեր Գրիգ[որ]»:*

Սույն տպագրությունից օրինակներ պահպանվում են Հայաստանի ազգային գրադարանում, Մատենադարանում, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում, Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանում և այլուր (ՈՍԿԱՆՅԱՆ, ՍԱՎԱԼՅԱՆ, ՍՈՂՈՄՈՆՅԱՆ, ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, ՍԱՀԱԿՅԱՆ, ԹԱԴԵՎՈՍՅԱՆ 1999, 80):

8. Ժամագիրք Ատենի. «Ժամակարգութիւն Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ»: Սույն տպագիր միավորը Էջմիածնի (Վաղարշապատ) «Ս. Էջմիածին» տպարանում տպագրված Մայր Ժամագրքերից է (ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ և այլք 2021, 109-110): Տպագրվել է 1862 թ.: Պարունակում է երեք գիրք, ըստ այդմ ունի երեք էջակալություն՝ 92, 143, 178: Կազմը՝ 35x22,5 սմ, շարվածքը՝ 26x16,7 սմ, գրությունը՝ երկսյուն, տողերի քանակը՝ 43-45: Ունի մուգ շագանակագույն կաշի, Ա. փեղկին սոսնձված սպիտակ թուղթ՝ «Սաղմոս» գրությամբ: Միջուկը՝ ստվարաթուղթ, աստառը՝ բաց կանաչ թուղթ: Կազմը՝ մաշված-պատռված: Մեջքը՝ թուլացած, որի հետևանքով մի քանի թերթեր հիմքում պոկված են: Կազմաստառը մաշված-կեղտոտված է: Լուսանցակողերը սևացած են և եզրերում ունեն մաշվածությունից առաջացած մանր պատռվածքներ: Թերթերին առկա են կեղտաբծեր, խոնավության, մոմի հետքեր, որոշ թերթեր հիմքում և եզրերում նորոգված են սպիտակ թղթով: Սկզբից, մեջտեղից և վերջից կան պակասավոր էջեր: Գրեթե ամբողջական պահպանված է միայն առաջին գլխի՝ «Ժամակարգություն...»

մասը, մնացյալ գլուխներից առկա են միայն որոշ թերթեր: Այն պարունակում է երեք գիրք, համապատասխանաբար երեք տիտղոսաթերթեր:

Տիտղոսաթերթ Ա՝ *[ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ / ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ / ՅՈՐՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿԻՆ ԵՐԵՔ ԳԻՐՔ / ՍԱՂՄՈՍ ԴԱՒԹԻ / ՈՐ Է ԱՂՕԹՔ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՍՏՈՒԱԾ / ԵՒ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ / ԱՏԵՆԻ ԺԱՄԱԳԻՐՔ, / ՈՐ Է ՄԱՏԵԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅ ԱՂՕԹԻՑ / ԵՒ ՊԱՇՏԱՄԱՆ / ՏՕՆԱՑՈՅՑ, / ՈՐ Է ՑՈՒՑԱԿ ՏՕՆԻՑ ԵՒ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՅ / ԸՍՏ ՆՈՐՈԳ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՆ ԷՋՄԻԱԾՆԻ / Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ / 1862=ՌՅԺԱ. /]*[7]:

Թեև գրքի ընդհանուր տիտղոսաթերթում հիշատակվում են նրա մեջ մտնող երեք մասերն էլ, սակայն, սաղմոսներից հետո եկող Ատենի Ժամագրքի և Տոնացույցի երկու հատորներն իրենց հերթին ունեն առանձին տիտղոսաթերթեր՝ զարդանկարներով: Առկա են էջախորագրեր, գլխագրեր, մեկ փորագիր պատկեր, բուսական գլխազարդեր, բաժանազարդեր և վերջնազարդեր: Վերոբերյալ գրքից օրինակներ առկա են Հայաստանի ազգային գրադարանում, Մատենադարանում, Հայաստանի պատմության թանգարանում (ՈՍԿԱՆՅԱՆ, ՍԱՎԱԼՅԱՆ, ՍՈՂՈՄՈՆՅԱՆ, ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, ՍԱՀԱԿՅԱՆ, ԹԱԴԵՎՈՍՅԱՆ 1999, 86):

9. Խորհրդատեսր: Տպագրության վայրը՝ Վաղարշապատ, տպարանը՝ «Ս. Էջմիածնի», տպագրության տարեթիվը՝ 1880 թ. (ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ և այլք 2021, 190-191): Կազմը՝ 34,5x26 սմ, շարվածքը՝ 30x20,5 սմ, գրությունը՝ երկսյուն, էջերի քանակը՝ 22 (Բ) զարդափակ էջ, տողերի քանակը՝ միջինում

[7] Մնացյալ՝ Բ., Գ., Դ. տիտղոսաթերթերի նկարագրությունը տե՛ս ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ և այլք 2021, 109-110:

36-47: Կազմը՝ դրոշմազարդ բաց մանուշակագույն մոմլաթ, միջուկը՝ ստվարաթուղթ, աստառը՝ սպիտակ թուղթ: Գրքի ընդհանուր վիճակը գնահատվում է բավարար: Կազմը՝ մաշված-կեղտոտված, խոնավությունից փոքր-ինչ գունափոխված: Կազմաստառը՝ մասամբ մաշված, տեղ-տեղ կեղտոտված: Թերթերի որոշ մասերում՝ կեղտաբծեր, ստորին աջ անկյուններում՝ մատնահետքեր:

Տիտղոսաթերթ՝ *ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ / ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ / ԸՍՏ ԾԻՍԻ / ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ / ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ: / ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ / Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ, / Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ /, 1880-ՌՅԻԹ: /*

Տիտղոսաթերթը, բովանդակության երկսյուն շարվածքը՝ զարդափակ ուղղանկյան մեջ: Տպագիր գիրքն ունի նաև էջախորագրեր և վերջնազարդեր: Նշված տպագրություններից օրինակներ առկա են Հայաստանի ազգային գրադարանում, Մատենադարանում, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում, Երևանի պետական համալսարանում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում (ՈՍԿԱՆՅԱՆ, ՍԱՎԱԼՅԱՆ, ՍՈՂՈՄՈՆՅԱՆ, ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, ՍԱՀԱԿՅԱՆ, ԹԱԴԵՎՈՍՅԱՆ 1999, 277):

10. Տարեցոյց՞: Տիտղոսաթերթի բացակայության պատճառով հնարավոր չէր իրականացնել ամբողջական մատենագիտական նկարագրություն: Տպագրության տարեթիվը, հավանաբար, 1884 կամ 1885 թթ.: Անհայտ են տպագրության վայրը, տպարանը, տպագրիչը: Թերթերը ներկայումս՝ 254, (ավելին է եղել): Կազմը՝ թղթյա, 19x12 սմ, շարվածքը՝ 16,5x10,8 սմ, գրությունը՝ միասյուն: Լուսանցակողերը՝ սևացած: Թերթերը սկզբում, մեջտեղում և վերջում բացակա են, առկա էջերն են՝ 3-254: Տպագիրը ենթակա է նորոգման:

11. Քարոզ՞: Տիտղոսաթերթի բացակայության պատճառով սույն գրքի մատենագիտական նկարագրությունն ամբողջացնել ևս

հնարավոր չէր: Տպագրության վայրը և տպարանն անհայտ են: Տպագրության տարեթիվը՝ 1900-ական թվականներ: Էջերը՝ 136 և ավել, մեծությունը՝ 16x10 սմ, շարվածքը՝ 12x6,5 սմ, գրությունը՝ միասյուն: Վիճակը՝ բավարար: Կազմը, կազմաստառը՝ բացակա: Թերթերին խոնավության, մոմի հետքեր, տեղ-տեղ կեղտաբծեր: Տիտղոսաթերթը, էջ 1-44, 136-ից հետո կան բացակա թերթեր:

12. Ժամագիրք: Տպագրության վայրը՝ Վաղարշապատ, տպարանը՝ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին»: Տպագրության տարեթիվը՝ 1903 թ. (ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ և այլք 2021, 190-359): Կազմված է 971 զարդափակ էջից: Կազմը՝ 12x8,3 սմ, շարվածքը՝ 9,7x6 սմ, գրությունը՝ միասյուն, տողերի քանակը՝ 12-21: Կազմը՝ դրոշմազարդ մանուշակագույն մոմլաթ, մեջքը՝ սև մետաքս, միջուկը՝ ստվարաթուղթ, աստառը՝ սպիտակ գրված թուղթ, լուսանցակողերը՝ կարմիր, պահպանակ Ա-Բ.՝ գրված թուղթ:

Տիտղոսաթերթ՝ *ԺԱՄԱԳԻՐՔ / ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ / Ս. ԵԿԵՂԵՅԻՈՅ: / ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, / Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի / 1903: /*

Ունի հետագա հիշատակարան՝ (20-րդ դար, շղագիր) Ա. կազմաստառին մանուշակագույն թանաքով՝ «Հանուն Յովհաննէսին, Յառաքել, Մարգարեյին, Կարապետին, Մկրտիչին, Ավետիսին, Մարդիրոսին», «Եօթ մահացու մեղկն, որ գործեալ եմ, մեղուցեալ եմ, մեղայ Աստուծոյ»: Տիտղոսաթերթին՝ մատիտով, մանուշակագույն թանաքով՝ «Սուրբ Կարապետի տոնի Յառաքելին, Յովհանեսին, Մարկարեյին, Հայրապետին, Կարապետին, Մկրտչին, Մարտիրոսին, Ավետիսն»:

Տիտղոսաթերթը և էջերը զարդափակ են: Ունի չորս փորագիր պատկեր և երկու վերջնազարդ, մեկ կնքադրոշմ՝ Բ կազմաստառին սև բոլորակ՝ «Հայ-Թազար /// ԱՐՄ. ՑԵՐԿ. ՍՎ. ԳԵՈՐԳԻ ///»: Գրքի

վիճակը՝ բավարար: Կազմաստառը՝ մասամբ մաշված, հիմքը՝ թուլացած: Թերթերին՝ տեղ-տեղ կեղտաբծեր, խոնավության, թանաքի, մատիտի հետքեր: Էջ 961-962, 963-964՝ հիմքից, 705-706՝ վերին հիմքից՝ անջատ:

Տպագիր գրքի օրինակներ կան Հայաստանի ազգային գրադարանում, Մատենադարանում, Հայաստանի պատմության թանգարանում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում (ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ և ուրիշն. 2007, 64):

13. Ստեփաննոս Օրբէլեան. Պատմութիւն Նահանգին Սիսական (ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 1942, 3): Տպագրության վայրը՝ Թիֆլիս: Նվարդ Աղանյանցի տպարանում տպագրված գրքերից է: Տպագրության տարեթիվը՝ 1910 թ., էջերի քանակը՝ 618, մեծությունը՝ 19,2x12,2 սմ, շարվածքը՝ 14x9 սմ, գրությունը՝ միասյուն: Գիրը՝ բոլորգիր, տողերի քանակը՝ 27: Կազմը՝ բաց շագանակագույն կաշի, մեջքը՝ մոխրագույն կտոր, միջուկը՝ ստվարաթուղթ, աստառը՝ թուղթ (Ա.՝ դեղնավուն, Բ.՝ կապտավուն), պահպանակ՝ Բ (վջ.)՝ տողագծերով թուղթ:

Տիտղոսաթերթ՝ *ՂՈՒԿԱՍԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ Դ. / ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՆԳԻՆ ՍԻՍԱԿԱՆ: / ԱՐԱՐԵԱԼ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՕՐԲԷԼԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍԻՒՆԵԱՑ / ԹԻՖԼԻՍ / ԵԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՑ 7, / 1910 /*

Տպագիր գիրքը բավարար վիճակում է. կազմը՝ եզրերից մաշված-պատռված, մեջքին՝ ցեցի անցքեր: Ա. փեղկը՝ հիմքում ամրացված սպիտակ թղթով և մանուշակագույն կտորով: Տիտղոսաթերթի արտաքին եզրը՝ պատռված-ընկած, պահպանվել է հիմքից որոշ հատված: Լուսանցակողերը՝ տեղ-տեղ սևացած: Գրքի օրինակներից առկա են Հայաստանի ազգային գրադարանում, Մատենադարանում և այլուր (ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ և ուրիշն. 2007, 321):

14. Օրացույց: Տպագրվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանում, 1960 թ.: Մեծությունը՝ 11,5x8,5 սմ, շարվածքը՝ 9x6 սմ, գրությունը՝ միասյուն, էջերի քանակը՝ 256 (գծափակ), տողերի քանակը միջինում՝ 12-26: Կազմը, միջուկը, աստառը, տիտղոսաթերթը բացակայում են: Լուսանցակողերը՝ ստորին անկյունում մաշված-պատռված, թերթերին՝ կեղտաբծեր, տեղ-տեղ խոնավության հետքեր: Տպագիր գրքի վիճակը գնահատվում է բավարար:

Տիտղոսաթերթ՝ *ՕՐԱՅՈՅՑ 1960 ՆԱՀԱՆՋ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ (ԸՍՏ ՆՈՐ ՏՈՄԱՐԻ) ԵՒ ԲՈՒՆ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ 4452-4453 ԵՒ ՏՈՄԱՐԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ ՌՆԹ-ՌՆԺ. = 1409-1410, ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ:*

Պատկերազարդ է, ունի բուսական գլխազարդեր: Տիտղոսաթերթը, շարվածքը կրկնակի եզրագծերի մեջ են առնված: Գրքից օրինակներ կան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գրադարանում և բազում այլ գրադարաններում:

Այսպիսով՝ ուսումնասիրության ենթարկված մասնավոր հավաքածուն հայտնաբերվեց և հետազոտման արժանացավ առաջին անգամ: Խնդրո առարկա տպագիր գրքերի լուսաբանումը հնարավորություն է ընձեռում շրջանառության մեջ դնել հայտնի տպագիր միավորներ, այդկերպ առատացնելով տպագիր գրականության բազմաբնույթ հավաքածուների շարքը՝ համալրելով դրանք ևս տասնչորս օրինակների բացահայտմամբ:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 1942 – Աբրահամյան, Ա. (1942), *Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի,* Երևան, «Մատենադարան» հրատ., 38 [Abrahamyan, A. (1942), *Jamanakagrutyun Stepannosi Orbeliani,* Yerevan, "Matenadaran" pbl., 38];

ԲԱԲԱՅԱՆ 1963 – Բաբայան, Ա. (1963), *Հայ գիրքը և տպագրությունը,* Երևան, Հայպետհրատ, 174. [Babayan, A. (1963), *Hay girqy ev tpagrutyuny,* Yerevan, Armenian State Publishing House, 174];

ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, ԱԴԱՄՅԱՆ, ԹԱԴԵՈՍՅԱՆ և այլք 2007 – Գյուլումյան, Օ. (2007), Ադամյան, Ա., Թադևոսյան, Ս., Սավալյան, Ա., Սողոմոնյան, Մ., Սահակյան, Ա., *Հայ Գիրքը 1901-1920 թվականներին,* հտ. Դ., Երևան, «Գիրք» հրատ., 817, 2 [Gyulumyan, O. (2007), Adamyan, A., Tadevosyan, S., Savalyan, A., Soghomonyan, M., Sahakyan, A., *Hay girqy 1901-1920 tvakannerin,* vol. D., Yerevan, "Girk" Publishing House, 817, 2];

ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ և այլք 2021 – Գրիգորյան, Մ., Պետոյան, Ս., Գրիգորյան, Գ., Նազարյան, Գ., Ոսկանյան, Շ., Սուվախչյան, Հ., Գալստյան, Ա. (2021), *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ հայ գրապպության կենտրոն. Հրատարակությունների մատենագիտություն 1772-1920*, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 743, 1 չհ. էջ [Grigoryan, M., Petoyan, S., Grigoryan, G., Nazaryan, G., Voskanyan, Sh., Suvakhchyan, H., Galstyan, A. (2021), *Mother See of Saint Etchmiadzin, center of Armenian printing. Bibliography of publications 1772-1920*, S. Etchmiadzin, Mother See of Saint Etchmiadzin pbl., 743, 1 p];

ԴԱՎԹՅԱՆ 1967 – Դավթյան, Հ. (1967), *Հայ գիրքը 1801-1850 թվականներին, մատենագիտություն*, Երևան, «Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան» հրատ., 536, 2 [Davtyan, H. (1967), *Armenian book in 1801-1850, bibliography,* Yerevan, "Republican Library after A. F. Myasnikyan" Publishing House, 536, 2];

ԼԵՎՈՆՅԱՆ 1946 – Լևոնյան, Գ. (1946), *Հայ գիրքը և տպագրության արվեստը*, Երևան, ԳԱ հրատ., 255 [Levonyan, G. (1946), *Hay girqy ev tpagrutyan arvesty*, Yerevan, Academy of Sciences, 255];

ԿՈՐԿՈՏՅԱՆ 1964 – Կորկոտյան, Ք. (1964), *Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում (1567-1850 թթ.),* Երևան, «Ալ. Մյասնիկյանի անվան պետական հանրապետական գրադարան» հրատ., 151, 2 [Korkotyan, K. (1964), *Armenian printed book in Constantinople (1567-1850),* Yerevan, "State Republican Library after Al. Myasnikyan" ed., 151, 2];

ՀԱԿՈԲՅԱՆ, ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ, ԲԱՐՍԵՂՅԱՆ 1998 – Հակոբյան, Թ., Մելիք-Բախշյան, Ս., Բարսեղյան, Հ. (1998), Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 4 (Ն-Վ), Երևան, «Երևանի համալսարանի» հրատ., 810 [Hakobyan, T., Melik-Bakhshyan, S., Barseghyan, H. (1998), *Dictionary of toponymy of Armenia and adjacent territories,* vol. 4 (N-V), Yerevan, "Yerevan University" Publishing House, 810];

ՃԻԶՄԷՃԵԱՆ 1957 – Ճիզմէճեան Պ. վարդ. (1957), *Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան,* հտ. 2, Հալէպ-Սուրիա, «Անի» տպր., 1460 [Chizmedjian P. rose (1957), *Hayeren lezvi liakatar bararan,* vol. second, Aleppo-Syria, "Ani" print., 1460];

ՄՈՒՐԱԴՅԱՆ 2011 – Մուրադյան, Ա., *Երուսաղեմի հայ տպագիր գրքի մատենագիտություն (1833-1996 թթ.)* (2011), Երևան, Հեղինակային հրատ., 147 [Muradyan, A., *Erusaghemi hay tpagir grqi matenagitutyun (1833-1996)* (2011), Yerevan, Author's edition, 147];

ՈՍԿԱՆՅԱՆ 1988 – Ոսկանյան, Ն., Կորկոտյան, Ք., Սավալյան, Ա. (1988), *Հայ գիրքը 1512-1800 թվականներին*, Երևան, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 864 [Voskanyan N., Korkotyan, Q., Savalyan, A. (1988), *The Armenian book in 1512-1800*, Yerevan, Public Library of Armenian SSR after Al. Myasnikyan, 864];

ՈՍԿԱՆՅԱՆ, ՍԱՎԱԼՅԱՆ, ՍՈՂՈՄՈՆՅԱՆ, ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, ՍԱՀԱԿՅԱՆ, ԹԱԴԵՎՈՍՅԱՆ 1999 – Ոսկանյան, Ն., Սավալյան, Ա., Սողոմոնյան, Մ., Գյուլումյան, Օ., Սահակյան, Ա., Թադևոսյան, Ս. (1999), *Հայ գիրքը 1851-1900 թվականներին,* Երևան, «Գիրք», 860 [Voskanyan, N., Savalyan, A., Soghomonyan, M., Gylumyan, O., Sahakyan, A., Tadevosyan, S. (1999), *The Armenian book in 1851-1900,* Yerevan, "Girk", 860];

ՍՏԵՓԱՆՅԱՆ 1973 – Ստեփանյան, Գ. (1973), *Կենսագրական բառարան (Հայ մշակույթի գործիչներ),* երեք հատորով, հտ. Ա. (Ա-Թ), Երևան, «Հայաստան» հրատ., 382 [Stepanyan, G. (1973), *Kensagrakan bararan (Hay mshakuyti gortsichner),* in three volumes, vol. A. (A-T), Yerevan, "Hayastan" Publishing House, 382];

ՏԷՐ-ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ, ԳԱՆԳՐՈՒՆԻ, ՏՕՆԻԿԵԱՆ 1968 – Տէր-Խաչատուրեան, Ա., Գանգրունի, Հ., Տօնիկեան, Փ., (1968), *Հայոց լեզուի*

նոր բառարան, Պէյրութ, Կ. Տօնիկեան եւ որդիք, 924 [Ter-Khachaturian, A., Gangrouni, H., Tonikian, P., (1968), *Hayots lezui nor bararan,* Beirut, "K. Tonikyan ev vordik", 924];

ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ 2022 – Տէր-Վարդանեան, Գ. (2022), *Յովհաննէս Վ. Զոհրապեանի ձեռագրական եւ բնագրագիտական վաստակը. Ինքնակենսագրականը,* Բանբեր Մատենադարանի, հտ. 33, Երևան, «Մատենադարան» հրատ., 67-90 [Ter-Vardanian, G. (2022), *Yovhannes V. Zohrapean's handwriting and ethnography merit. The autobiography,* Banber Matenadaran, vol. 33, Yerevan, "Matenadaran" Publishing House, 67-90];

ՕՐՄԱՆԵԱՆ 1972 – Օրմանեան, Մ. (1979), *Ծիսական բառարան,* Անթիլիաս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, 195 [Ormanian, M. (1979), Tsisakan bararan, Antelias, Metsi Tann Kilikio Katoghikosutyun, 195];

THE PRIVATE COLLECTION OF VALUABLE PRINTED BOOKS

SATENIK GRIGORYAN

Matenadaran, the Mesrop Mashtots
Research Institute of Ancient Manuscripts

Keywords: Gegharkunik province (RA), Vardadzor village, Mush province, Western Armenia, Tazagyugh, Manukyan family, print books, private collection.

This work deals with the study of a private print collection of fourteen titles owned by an individual. The collection of valuable printed books belongs to the family of Azat Manukyan, a resident of Vardadzor village. After a long journey, it found its final resting place in the Manukyan family. The collection was moved to Vardadzor village in the 1940s, from Tazagyugh, another village in Martuni region (Gegharkunik province, RA). Some of the prints were brought to Tazagyugh in the 1800s. during the deportation period, from Mush province of Western Armenia. Now, a place of worship has been built in the adjacent part of the house for prints. The collection was discovered and studied for the first time. Through these prints, Armenian printed literature was enriched by fourteen more.